Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Կատարողական վարույթը կասեցնելու մասին

«23» մայիս 2022թ. ք . Գորիս

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայոր ՎԱՀԱԳՆ ՍԻՄՈՆՅԱՆՍ ուսումնասիրելով «11» 03 2022թ. հարուցված թիվ 08821623 կատարողական վարույթի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Տ Ի

ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից տրված թիվ ՍԴ3/1014/02/21 կատարողական թերթի համաձայն պետք է Հրայր Բենիկի Աբալյանից և մյուսներից համապարտության կարգով հօգուտ «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի բռնագանձել 2.275.857 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ: Պարտապաններից բռնագանձել նաև բռնագանձման ենթակա գումարների 5 տոկոսը, որպես կատարողական գործողությունների կատարման ծախսի գումար:

Կատարողական վարույթով վճռի հարկադիր կատարման ընթացքում պարտապան Հրայր Բենիկի Աբալյանի անվամբ բռնագանձման ենթակա գույք և դրամական միջոցներ չեն հայտնաբերվել:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 28.1-րդ հոդվածներով և 37-րդ հոդվածի 8-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ե Տ Ի

Կասեցնել «11» 03 2022թ. հարուցված թիվ 08821623 կատարողական վարույթը 90–օրյա ժամկետով:

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապանին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90 -օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան.

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում.

Որոշման պատճենն ուղարկել կողմերին.

Որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված կարգով :

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՅՈՐ **Վ. ՍԻՄՈՆՅԱՆ**